

## ԿՂԵՐԱԿԱՆ ՍՈՓԵՍՏՈՒԹԻՒՆՆԵՐ

(Երկու խօսք «Արարատին»)

«Մուրճի» № 7-ի մէջ ես մի փոքրիկ մատենախօսութիւն  
Ս. Մ.-ի թարգմանած «Ֆարրարի Քարոզներ» գրքի ա-  
յդ հատուկ Բանից դուրս է գալիս որ ես յանցանք եմ գործել, ո-  
րովհետեւ այդ փոքրիկ յօդուածով զիպել եմ էջմիածնի սիւներից  
և կուռքերից մէկին, «Երեկի» մանկավարժ Ս. Մանդինեանցին:  
Յօդուածը գրելիս՝ իմ աչքի առջև Ս. Մ. տառերը կային և ինձ  
համար մի և նոյն էր թէ ինչ անուն է թագնուած այդ տառերի  
տակ. եթէ Ս. Մ.-ի փոխարէն շարուած լինէին հայոց այբուբե-  
նի բոլոր տառերը—գոյգ-գոյգ, թէ հատ-հատ, ես պիտի ասէի  
այն, ինչ ասել եմ, ինչ կարող էի ասել այդ տեսակ մի գրքի  
մասին: Էջմիածնի կրօնական «Արարատը» յուլիս-օգոստոս հա-  
մարում՝ փրփուրը բերանին հրապարակ է նետուել իմ «յան-  
ցանքը» պատժելու համար. և նրա առաջին աղաղակն այն է,  
թէ Ս. Մ.-ն Ս. Մանդինեանցն է: Սրանից դուրսիւնը, ի հար-  
կէ, չէ փոխուում. եթէ ինձ սարսեցնելու համար է այդ անունը  
յայտնագործուած,—ի դուր է. իսկ եթէ միամիտներին մոլորե-  
ցնելու համար է, այդ էլ աւելորդ է: Պ. Մանդինեանը չէ կարող  
ոչ վախեցնել, ոչ էլ միամիտներ գտնել՝ մոլորեցնելու համար:  
Ինչ և իցէ, «Արարատը» շատ է քարկացել, Բարկացել է  
այն աստիճան, որ մոռացել է թէ փարաջայ ունի հազած և  
ծածկել է զլիսին ծաղրածուի թաղիքէ զլիսարկ, տափակ սրա-  
խօսութիւններ է անում իմ անուան առիթով, անուանում է ինձ  
«Վասակ» և այլն: Ճիշտն ասած, ինչ շատ զուարճացրեց խեղ-  
կատակութիւններ կատարող փարաջան. դա յամենայն դէպս  
նոր երևոյթ է: Եւ որպէս զի «Արարատը» այդ զարմանալի  
զուարճացնող գերի մէջ շատ մնայ, ես կ'առաջարկէի նրան մի  
չարք անուններ հէնց նոյն իսկ էջմիածնից վերցրած. օրինակ,  
Կորիւն, Կարապետ, Սեղբակ, Եգնիկ: Երեւակայել կարելի է թէ

որքան անսպառ սրախօսութիւններ կարելի է անել այդ անունների առիթով...

Բայց որն է իմ յանցանքը:

Ես ասել եմ որ մեզ քարոզագրքեր չեն հարկաւոր. ես ասել եմ որ նոյն իսկ Ֆարրարի պէս կրօնական գրողը իր քարոզներով ոչինչ նոր բան չէ կարող սովորեցնել զարերից ի վեր կրօնական գրքերով կերակրուող հային. ես ասել եմ որ մենք բաւականաչափ հոգեւորական գրողներ ունենք, և աշխարհական մարդիկ լաւ կ'անէին որ ուրիշ տեսակ գրքերի մասին մտածէին, ժողովրդի կարիքները պարզող գրքերի մասին: Ես ասել եմ որ մենք չարունակ յետ ենք մնացել, քարացած մնալով կրօնամոլութեան մէջ, մինչդեռ մեր հարեանները չարունակ գնում են ժամանակի պահանջների ետեից:

«Արարատը» հակասութիւններ է գտնում իմ այդ խօսքերի մէջ: Անգլիացում, ասում է նա, հազարաւոր մարդիկ կարգում և լսում են Ֆարրարի քարոզները: Հրաշալի համեմատութիւն: Դա նշանակում է որ հայոց տգէտ, տիրացու ժողովուրդը ճիշտ և ճիշտ անգլիական ազգն է: Ողորմելիներ: Գիտէք դուք որ անգլիացին Ֆարրարի քարոզներից յետոյ կարող է կարգալ Դարվին, Սպենսէր, իսկ հայը: Ֆարրարից յետոյ խեղճ հայը կարող էր տեսնել միմիայն ուրիշ տեսակ հարիւրաւոր Ֆարրարներ—Գրիգոր Տաթևացի, Գրիգոր Նարեկացի եայլն, եայլն: Ո՛չ, ես չեմ խղճում Ֆարրարի քարոզները կարգացող անգլիացուն, ինչպէս դուք էք կարծում, այլ համոզուած եմ որ Ֆարրարի քարոզները կարգացող անգլիացին է մեզ խղճում, քանի որ մենք միայն Ֆարրարներով ենք կերակրուում, ոչինչ հասկացողութիւն չունենալով այն մտաւոր կերակուրների մասին, որ նա վայելում է Ֆարրարից առաջ և Ֆարրարից յետոյ: Հասկանալի է:

Մի այլ հակասութիւն էլ է եղել իմ խօսքերի մէջ: Ես որպէս թէ չեմ իմացել որ «Ֆարրարի Գարոզները» կարող են հարկաւոր դալ հայ քահանաներին: «Արարատը» երկար ու ճիգ խորհրդածութիւններ է անում այս մասին: Ինչպէս է, ասում է նա, որ դուք յարձակուում էք քահանաների վրայ, ասելով թէ նրանք քարոզել չը գիտեն և յետոյ աւելորդ էք համարում որ քարոզագիրք թարգմանուի հայերէն լեզուով: Բայց իմ յօդուածի մէջ ես հայ քահանաներին չեմ մոռացել. ես ասել եմ թէ հայ աւերտէրներին էլ հարկաւոր չի լինի այդ գիրքը, քանի որ նրանք անգրագէտ են, չեն հասկանում իրանց կարգացածը: Եւ ես այս փաստը ինքս չեմ գտել, այլ վերցրել եմ էջմիածնի պաշտօնական օրդան «Արարատից»: Ասցեալ տարի էր, կարծեմ, որ «Արարատը» մի սքանչելի պարզամտութեամբ խոստովանեց թէ

ինքը չէ կարող այնպէս գրել որ հայ քահանաները հասկանան, որովհետև հայ քահանան տգէտ է: Եւ երբ այդպէս է, երբ նոյն իսկ «Արարատի» յօդուածներն անգամ հայ տէրտէրի համար անմատչելի կերակուր են, ինչ կասկած կարող է լինել որ աւելի անմատչելի, աւելի անհասկանալի կը լինեն Ֆարրարի քարոզները, մանաւանդ երբ նրանք թարգմանուած են պ. Մանդինեանի ձեռքով, պ. Մանդինեանի հայերէնով...

Այստեղ «Արարատը» դարձեալ ժամածուծիւններ անողի կերպարանք է ընդունում և ասում է ինձ. իսկ եթէ ունենանք հասկացող քահանաներ, «եթէ այն երանելի ժամանակը գայ, երբ բոլոր ատէրները «Քահանայական խնդրի» հեղինակի պահանջած ուսումն ու հասկացողութիւնն ունենան»: Այն ժամանակ, կը պատասխանեմ ես, աւելորդ կը լինիք դուք, ողորմելի միջակութիւններդ, ձեր անմարտելի թարգմանութիւններով. այն ժամանակ քահանան ինքը իրանից քարոզներ կը յօրինէ և ոչ թէ ձեր բեցեպտով, թութակի պէս կը կրկնէ Ֆարրարի խօսքերը:

«Հակասութիւններից» յետոյ էջմիածնի օրգանը գալիս է ապացուցանելու որ «սուտ է ու շինծու այն կարծիքը, իբր թէ մեր ժողովրդի ամենամեծ ու ստիպողական կարիքը արուեստի, գիւղատնտեսութեան ու առողջապահութեան վերաբերեալ հրահանգներ ստանալն է»: Ո՛չ, ամենևին այդ չէ. մեր ժողովուրդը շատ լաւ է, շատ առաջադէմ է, նրան պակասում է միայն հոգեորդ, միայն կրօնականը:

Սա արդէն մի այնպիսի սովետութիւն է, որի դիմաց կարելի է միայն ուսերը թոթուել: Կղերականութիւնը միշտ այդպէս սպանող զեր է կատարել ժողովուրդների կեանքի մէջ. փոխանակ իր հօտը առաջ մղելու, փոխանակ նրան քաղաքակրթութեան բարիքները սովորեցնելու, նա միշտ ասել է.— դու չափազանց շատ ես սիրում աշխարհը, չափազանց շատ ես վայելում երկրաւոր բարիքները. թո՛ղ ամեն ինչ և երկնքի մասին մտածիր: XX դարի էջմիածինը մաղի չափ չէ առաջացել այն միջնադարեան խաւար օրերից, երբ խաւար կղերը վայնասուն էր բարձրացնում աշխարհական առաջադիմութեան դէմ: Տէր Աստուած. ներկայ ժամանակներում, ազգերի սրարշաւ առաջադիմութեան, կուլտուրական մրցութիւնների ժամանակում, երբ մի օրով ուշացողը դատապարտուած է ուրիշների ոտների տակ տրորուել, հայոց խեղճ ժողովուրդը, ազիտութեան ճանկերի մէջ տանջուող այս նահատակը, ինչեր է լսում:

Եւ յետոյ զարմանում է «Արարատը» որ «որ հոգով տիրացու համարուող հայ ժողովուրդը ներկայումս ամենից քիչ իր

հոգևոր պէտքերովն ու պարտականութիւններովն է հետաքրքրուում»։ Զարմանալի չէ այդ երևոյթը. հնադարեան մտքերով տողորուած, տգէտ, անպատրաստ հոգևորականութիւնը, որ այդպիսի քնացնող, յետագէմ քարոզներ է տալիս, չէ կարող ունենալ ուրիշ տեսակ ժողովուրդ։ Ֆարրարները չեն օգնի այդ ժողովրդին, դրա համար հարկաւոր է մի լուսաւոր, եռանդուն, ժամանակի ոգով տողորուած գործունէութիւն, իսկ դուք անընդունակ էք հէնց այդպիսի գործունէութեան համար։ Դուք կարող էիք գոյութեան իրաւունք ունենալ մի ժողովրդի մէջ, որ մեզանից 5—10 դար առաջ էր ապրում։ Աւաղ. ոչ որ չէ կարող ձեզ համար այդպիսի մի հրաշք գործել. և դուք անխուսափելի կերպով պիտի ընկնէք, քանի որ այդպէս կը մնաք։

Ես չեմ կարող աչքաթող անել «Արարատի» մի վարմունքն էլ. իբր թէ իր մեծ գիտութիւնը ցոյց տալու համար նա ինձ մրցանակ է խոստանում, եթէ «Դիօզենէսի լապտերով չէ՛ Ռեօնտգէնեան ճառագայթներով» գտնէի մի հատ հայնրէն գիրք Ֆարրարի քարոզների նման։ Դիօզենէս և Ռեօնտգէն չեն հարկաւոր էջմիածնի անգիտութիւնը լուսաւորելու համար։ Թողնելով շատ շատերը, ես ցոյց կը տամ «Արարատին» հէնց չորսհինգ տարի առաջ նոյն էջմիածնում տպուած «Պարզ քարոզներ» անունով մի շարք տետրակները, հեղինակութիւն է. քահանայ Նազարեանցի։ Ինձ խոստացած մրցանակը թողնում եմ «Արարատի» ղեկավարներին, որպէս զի նրանով բուժել տան իրանց այդ «գիտնական տգիտութիւնը»։

Մի խօսք էլ։ «Արարատը» իբր թէ հեզնելով գործ է ածում «խաւարամիտ» բառը։ Բայց ինչո՞ւ հեզնել. խաւար մտքեր ունեցողը խաւարամիտ է, ուրիշ ոչինչ. ինչպէս դուք կարող էք յոյս ունենալ որ խաւար մտքեր ունեցողին լուսամիտ անուանեն։ Իսկ որ դուք խաւարամիտ էք—միթէ դեռ պէտք կայ ապացուցանելու...

Լ.